ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «11» դեկտեմբեր 2025թ N 3832 Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ (ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱՅԻ) ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1220-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետը, 17-րդ և 18-րդ կետերը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 6-ի N 138-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի 5-րդ ենթակետով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Սահմանել «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2026 թվականների» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում

է մինչև սույն հրամանի ուժի մեջ մտնելը Ծրագրի շրջանակներում ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն հրամանի հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատանքները համակարգող տեղակալին:

4. Սույն Կարգով չնախատեսված դրույթները կարգավորվում են Ծրագրով սահմանված կարգով:

Recoverable Signature

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ՀԱՎԵԼՎԱԾ
Էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի դեկտեմբերի 11 -ի
N 3832 - Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ (ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱՅԻ) ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1220-Լ որոշմամբ հաստատված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում մոնիթորինգի իրականացման գործընթացը և դրան առնչվող իրավահարաբերությունները:
2. Սույն կարգը տարածվում է Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ), Ծրագրին մասնակից շահառուների և գնորդների վրա:
3. Մոնիթորինգն իրականացվում է ՊՈԱԿ-ի կողմից փաստաթղթերի ուսումնասիրման, տնտեսություններ այցելությունների, տեղանքի ուսումնասիրության միջոցով՝ փաստաթղթերով ներկայացված տեղեկատվության արժանահավատության գնահատման և Ծրագրով սահմանված պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:
4. Ծրագրի շրջանակում մոնիթորինգն իրականացվում է ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից 2 փուլով՝
   - ավարտական մոնիթորինգ,
   - տարեկան մոնիթորինգ,
5. Նախարարության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչության (այսուհետ՝ ԳԾԻՎ) կողմից գլխավոր քարտուղարի պաշտոնական գրությամբ ներկայացված համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո ՊՈԱԿ-ի

ներկայացուցիչը 15 աշխատանքային օրվա ընթացքում, Ծրագրի 16-րդ կետով ներկայացված փաստաթղթերով ներկայացված տեղեկությունների արժանահավատության գնահատման և Ծրագրով սահմանված պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով իրականացնում է մոնիթորինգ: Մոնիթորինգն իրականացվում է փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրությունից և շահառուի տնտեսություն այցելության վերաբերյալ վերջինիս հետ նախապես պայմանավորվածությունից հետո՝ տնտեսություններ այցելությունների ու տեղանքի ուսումնասիրության միջոցով: Մոնիթորինգի արդյունքների հիման վրա 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է եզրակացություն (Ծրագրի չափորոշիչներին համապատասխանելու դեպքում՝ դրական եզրակացություն, չհամապատասխանելու դեպքում՝ բացասական եզրակացություն)՝ կից լուսանկարներով: Մոնիթորինգի արդյունքում կազմված արձանագրությունը մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Նախարարություն:

6. Շահառուի կամ գնորդի կողմից մոնիթորինգի իրականացմանը խոչընդոտելը (չապահովելը)՝ կդիտարկվի որպես Ծրագրի պայմանների խախտում և հիմք է 5 աշխատանքային օրվա ընթացքում մոնիթորինգի իրականացման անհնարինության վերաբերյալ եզրակացություն կազմելու համար: Եզրակացությունը մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Նախարարություն:
7. Մոնիթորինգն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

1) Ծրագրով սահմանված փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո ԳԾԻՎ-ը 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է Ծրագրով պահանջվող փաստաթղթերի ամբողջականությունը, այնուհետև, Նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնական գրությամբ փաստաթղթերի փաթեթը ներկայացվում է ՊՈԱԿ-ին՝ շահառուի տնտեսությունում մոնիթորինգ իրականացնելու նպատակով:
2) Յուրաքանչյուր մոնիթորինգի ավարտին՝ տեղում կազմվում է եզրակացություն՝ Ծրագրի չափորոշիչներին համապատասխանելու դեպքում՝ դրական եզրակացություն, չհամապատասխանելու դեպքում՝ բացասական եզրակացություն (կից լուսանկարներով)՝ հաշվի առնելով շահառուի կողմից մասնակցության դիմումի ներկայացման պահին

Ծրագրի գործող դրույթները: Եզրակացությունը կազմվում է գրավոր՝ համապատասխան ձևաթղթով:

3) Մոնիթորինգի ընթացքում շահառուից կամ գնորդից կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն՝ փաստաթղթերի, լուսանկարների կամ տեսաժապավենների տեսքով:

4) Յուրաքանչյուր մոնիթորինգի արդյունքում կազմված եզրակացությունը փոխանցվում է ԳԾԻՎ-ին՝ գործի համապատասխան ընթացքն ապահովելու նպատակով,

8. Ծրագրի շրջանակում ավարտական մոնիթորինգն իրականացնում է ՊՈԱԿ-ը՝ ԳԾԻՎ-ի կողմից գլխավոր քարտուղարի պաշտոնական գրությամբ ներկայացված փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո: Մոնիթորինգի արդյունքում կազմվում է եզրակացություն (**Ձև 1-ը՝** 2022 թվականի օգոստոսի 7-ից մինչև 2024 թվականի հունիսի 15-ը Ծրագրին մասնակցության հայտ ներկայացրած և շահառու հաշվառված ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի տնտեսություններում իրականացված ավարտական մոնիթորինգի արդյունքում, **Ձև 2-ը՝** 2024 թվականի հունիսի 16-ից հետո Ծրագրին մասնակցության հայտ ներկայացրած և շահառու հաշվառված ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի տնտեսություններում իրականացված ավարտական մոնիթորինգի արդյունքում): Ավարտական մոնիթորինգի ընթացքում իրականացվում է միավորված (կոնսոլիդացված) հողատարածքների լուսանկարում:

9. Ծրագրի շրջանակում տարեկան մոնիթորինգն իրականացնում է ՊՈԱԿ-ը՝ ԳԾԻՎ-ի կողմից գլխավոր քարտուղարի պաշտոնական գրությամբ Ծրագրի շրջանակում փոխհատուցում ստացած շահառուների վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո: Տարեկան մոնիթորինգի արդյունքում կազմվում է եզրակացություն (Ձև 3-ը):

10. Անհրաժեշտության դեպքում Նախարարության նախաձեռնությամբ ՊՈԱԿ-ը կարող է շահառուի տնտեսությունում իրականացնել կրկնակի մոնիթորինգ՝ սույն կարգի 7-րդ կետով սահմանված ընթացակարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1220-Լ որոշման հավելվածով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2026 թվականների» ծրագրի շրջանակում իրականացվող ավարտական մոնիթորինգի[1]

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մոնիթորինգի և տեղազննության իրականացման բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից՝ Ծրագրի շրջանակներում Նախարարության և շահառու _____-ի (այսուհետ՝ Շահառու)՝ միջև_____._____20____թ.-ին կնքված N _____-_____ Պայմանագրի համաձայն _____ մարզի _____ համայնքի _____ բնակավայրում միավորված հողատարածքներում իրականացված մոնիթորինգի ընթացքում արձանագրվել է հետևյալը՝

1. Միավորված հողամասի ընդհանուր մակերեսը՝ _____հա, գույքային միավորների քանակը՝ _____ միավոր,

2. Միավորման անհնարինությամբ պայմանավորված՝ չմիավորվող հողամասերի մակերեսը՝_____հա, գույքային միավորների ընդհանուր թվաքանակը՝ _____ միավոր,

3. Ջրային ռեսուրսի հասանելիություն՝

   - Հասանելի է ☐
   - Հասանելի չէ ☐

[1] Տարածքի տեղազննություն, Ծրագրի չափորոշիչների համապատասխանության ու ներկայացված տեղեկատվության արժանահավատության գնահատում և լուսանկարում:

4. Միավորված և/կամ չմիավորվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական(ներ)

N	1.1 Վկայականի համար	1.2 Կադաստրային ծածկագիր	1.3 Հողի նպատակային և գործառնական նշանակություն	1.4 Գրանցված իրավունքի տեսակը

5. Միավորված (կոնսոլիդացված) հողամասերում Ծրագրի N 1 աղյուսակով նախատեսված և իրականացված աշխատանքների վերաբերյալ

N	**Աշխատանքի անվանումը**	**Կատարված է / կատարված չէ**	Աշխատանքի իրականացման նպատակով կատարված ծախսը **արժանահավատ է/արժանահավատ չէ**	Աշխատանքի չկատարման վերաբերյալ հիմնավորում առկա է / առկա չէ Բավարար է / բավարար չէ
1.	Մակերեսային և խորքային քարերի հավաքում քարհավաք մեքենաներով և կուտակում			
2.	Հավաքված քարերի տեղափոխում			
3.	Տարածքի հարթեցում			

N	Աշխատանքի անվանումը	Կատարված է / կատարված չէ	Աշխատանքի իրականացման նպատակով կատարված ծախսը **արժանահավատ է/արժանահավատ չէ**	Աշխատանքի չկատարման վերաբերյալ հիմնավորում առկա է / առկա չէ Բավարար է / բավարար չէ
4.	Տարածքի հողի անալիզ, մեխանիկական կազմի և հզորության որոշում			
5.	Գոմաղբի, թռչնաղբի, տորֆի և զանազան կոմպոստների կիրառում			
6.	Խոր վար տրակտորային գութաններով՝ 30-35 սմ			
7.	Հողի նախապատրաստական աշխատանքներ՝ չիզել փխրեցում			
8.	Ոռոգման նպատակով ջրավազանի կառուցում՝ 1 հա մակերեսի համար ոչ պակաս, քան 1000 խմ			

Մոնիթորինգի իրականացման ժամանակ հաշվի են առնվել Շահառուի կողմից մասնակցության դիմումի ներկայացման պահին Ծրագրի գործող դրույթները՝ ☐

Լրացուցիչ տեղեկատվություն

Եզրակացություն

- Դրական՝ համապատասխանում է Ծրագրի պահանջներին և արժանահավատ է ☐
- Բացասական՝ չի համապատասխանում Ծրագրի պահանջներին և/կամ արժանահավատ չէ ☐, քանի որ _____

_____

Շահառուի կարծիք (մասնավորապես անհամաձայնության վերաբերյալ)՝ _____

_____

Առդիր՝ Մոնիթորինգի _____ լուսանկար:

Շահառու՝ _____, _____
(անուն, ազգանուն, անձնագրի կամ նույնականացման քարտի համար կամ ՀԿՀՀ) *(ստորագրություն)*

Մոնիթորինգ իրականացնող (ներ)՝ _____, _____
(պաշտոն, անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

_____, _____
(պաշտոն, անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

_____, _____
(պաշտոն, անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Բաժնի պետ՝ _____, _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Տնօրենի տեղակալ՝ _____, _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Տնօրեն՝ _____, _____
(անուն, ազգանուն) *(Կ.Տ ստորագրություն)*

« » _____ 20 թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1220-Լ որոշման հավելվածով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2026 թվականների» ծրագրի շրջանակում իրականացվող ավարտական մոնիթորինգի[1]

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մոնիթորինգի և տեղազննության իրականացման բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից՝ Ծրագրի շրջանակներում Նախարարության և շահառու _____-ի (այսուհետ՝ Շահառու)՝ միջև_____._____20____թ.-ին կնքված N _____-_____ Պայմանագրի համաձայն _____ մարզի _____ համայնքի _____ բնակավայրում միավորված հողատարածքներում իրականացված մոնիթորինգի ընթացքում արձանագրվել է հետևյալը՝

1. Միավորված հողամասի ընդհանուր մակերեսը՝ _____հա, գույքային միավորների քանակը՝ _____ միավոր,

2. Միավորման անհնարինությամբ պայմանավորված՝ չմիավորվող հողամասերի մակերեսը՝_____հա, գույքային միավորների ընդհանուր թվաքանակը՝ _____ միավոր,

3. Միավորված և/կամ չմիավորվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական(ներ)

N	1.1 Վկայականի համար	1.2 Կադաստրային ծածկագիր	1.3 Հողի նպատակային և գործառնական նշանակություն	1.4 Գրանցված իրավունքի տեսակը

[1] Տարածքի տեղազննություն, Ծրագրի չափորոշիչների համապատասխանության ու ներկայացված տեղեկատվության արժանահավատության գնահատում և լուսանկարում:

Մոնիթորինգի իրականացման ժամանակ հաշվի են առնվել Շահառուի կողմից մասնակցության դիմումի ներկայացման պահին Ծրագրի գործող դրույթները՝ ☐

Լրացուցիչ տեղեկատվություն

_____

_____

_____

_____

Եզրակացություն

- Դրական՝ համապատասխանում է Ծրագրի պահանջներին և արժանահավատ է ☐
- Բացասական՝ չի համապատասխանում Ծրագրի պահանջներին և/կամ արժանահավատ չէ ☐, քանի որ_____

_____

_____

_____

Շահառուի կարծիք (մասնավորապես անհամաձայնության վերաբերյալ)՝ _____

_____

_____

Առդիր՝ Մոնիթորինգի _____ լուսանկար:

Շահառու՝ _____, _____
(անուն, ազգանուն, անձնագրի կամ նույնականացման քարտի համար կամ ՀԿՀՀ) *(ստորագրություն)*

Մոնիթորինգ իրականացնող (ներ)՝ _____, _____
(պաշտոն, անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

_____, _____
(պաշտոն, անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

_____, _____
(պաշտոն, անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Բաժնի պետ՝ _____, _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Տնօրենի տեղակալ՝ _____, _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Տնօրեն՝ _____, _____
(անուն, ազգանուն) *(Կ.Տ ստորագրություն)*

« » _____ 20 թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1220-Լ որոշման հավելվածով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2026 թվականների» ծրագրի շրջանակում իրականացվող տարեկան մոնիթորինգի[1]

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մոնիթորինգի և տեղազննության իրականացման բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից՝ Ծրագրի շրջանակներում Նախարարության և շահառու _____-ի (այսուհետ՝ Շահառու/Գնորդ)՝ միջև_____._____20____թ.-ին կնքված N _____-_____ Պայմանագրի համաձայն _____ մարզի _____ համայնքի _____ բնակավայրում միավորված հողատարածքներում իրականացված մոնիթորինգի ընթացքում արձանագրվել է հետևյալը՝

1. Միավորված հողամասի ընդհանուր մակերեսը՝ _____հա, գույքային միավորների քանակը՝ _____ միավոր,

2. Միավորման անհնարինությամբ պայմանավորված՝ չմիավորվող հողամասերի մակերեսը՝_____հա, գույքային միավորների ընդհանուր թվաքանակը՝ _____ միավոր,

3. Միավորված և/կամ չմիավորվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական(ներ)

N	1.1 Վկայականի համար	1.2 Կադաստրային ծածկագիր	1.3 Հողի նպատակային և գործառնական նշանակություն	1.4 Գրանցված իրավունքի տեսակը

[1] Տարածքի տեղազննություն, Ծրագրի չափորոշիչների համապատասխանության ու ներկայացված տեղեկատվության արժանահավատության գնահատում և լուսանկարում:

4. Սեփականության (համատեղ սեփականության, բաժնային սեփականության) իրավունքով իրեն պատկանող միավորված հողամասն առանձին միավորների՝

- Բաժանված է ☐
- Բաժանված չէ ☐

5. Միավորված հողամասի նպատակային նշանակությունը՝

- Փոփոխված է ☐
- Փոփոխված չէ ☐

6. Միավորված և չմիավորվող հողամասերը օգտագործում է գյուղատնտեսական նպատակներով՝ իրականացնելով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակություն՝

- Այո ☐ _____

(նշել օգտագործման նպատակը, մշակաբույսի տեսակը և հողամասի քանի տոկոսն է մշակվում)

- Ոչ ☐ _____

7. Միավորված հողամասը (համատեղ կամ բաժնային սեփականությամբ իրեն պատկանող բաժինը) հանձնել է վարձակալության՝

- Այո ☐ _____

(նշել վարձակալության հանձնման ձևը՝ վարձակալության պայմանագիր, համաձայնություն և այլն)

- Ոչ ☐

8. Միավորված հողամասը (համատեղ կամ բաժնային սեփականությամբ իրեն պատկանող բաժինը) օտարել է՝

- Այո ☐

- Ոչ ☐

9. Նախորդ տարվա մոնիթորինգի արդյունք՝

- Դրական ☐

- Բացասական ☐

Մոնիթորինգի իրականացման ժամանակ հաշվի են առնվել Շահառուի կողմից մասնակցության դիմումի ներկայացման պահին Ծրագրի գործող դրույթները՝ ☐

Լրացուցիչ տեղեկատվություն

_____

_____

Եզրակացություն

- Դրական՝ համապատասխանում է Ծրագրի պահանջներին ☐
- Բացասական՝ չի համապատասխանում Ծրագրի պահանջներին և/կամ արժանահավատ չէ ☐, քանի որ _____

_____

Շահառուի/Գնորդի կարծիք (մասնավորապես անհամաձայնության վերաբերյալ)՝ _____

_____

Առդիր՝ Մոնիթորինգի _____ լուսանկար:

Շահառու/Գնորդ՝ _____, _____
(անուն, ազգանուն, անձնագրի կամ նույնականացման քարտի համար կամ ՀԿՀՀ) *(ստորագրություն)*

Մոնիթորինգ իրականացնող (ներ)՝ _____, _____
(պաշտոն, անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

_____, _____
(պաշտոն, անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

_____, _____
(պաշտոն, անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Բաժնի պետ՝ _____, _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Տնօրենի տեղակալ՝ _____, _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Տնօրեն՝ _____, _____
(անուն, ազգանուն) *(Կ.Տ ստորագրություն)*

« » _____ **20 թ.**